ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ

Ազգային ժողովին «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկող

հեռ. +374 55 230330, +374 91 193526
Էլ.փոստ՝ info@eurovote-armenia.org, վեբ-կայք՝ http://www.eurovote-armenia.org

№ 16, 12.12.2024թ, ք. Երևան:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ,
Պարոն Ալեն Սիմոնյանին
19 շ, Մարշալ Բաղրամյան պ, ք. Երևան, 0095, Հայաստան

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ թվային ստորագրությամբ

Քաղաքացիական նախաձեռնության կարգով նախաձեռնված օրենքի նախագիծը ՀՀ ԱԺ ներկայացնելու մասին

Հարգելի Պարոն Սիմոնյան,

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 11.09.2024թ «Նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանին գրանցելու մասին» № 7-Ա որոշմամբ գրանցել է Ազգային ժողովին «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (հետայսու՝ Օրենքի նախագիծ) առաջարկելու նպատակով կազմավորված նախաձեռնող խումբը (հետայսու՝ Նախաձեռնող խումբ):

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 10.12.2024թ «Ազգային ժողովին օրենքի նախագիծ ներկայացնելու նպատակով հավաքված ստորագրությունների վավերականությունը հաստատելու մասին» № 12-Ա որոշմամբ (հետայսու՝ 10.12.2024թ № 12-Ա Որոշում) հաստատել է, ավելի քան 50 հազար քաղաքացիների ստորագրությունների իսկությունը:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 10.12.2024թ № 12-Ա Որոշումը ստացել եմ նույն օրը:

ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով երաշխավորված, ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 4-րդ մասով ապահովված իրավունքով Նախաձեռնող խմբի անունից ՀՀ Ազգային ժողով եմ ներկայացնում Օրենքի նախագիծը:

Հիմնական զեկուցող կլինեմ ես՝ Արտակ Հայկազի Զեյնալյանս:

Կից ներկայացնում եմ.

1. Արտակ Զեյնալյանի նույնականացման քարտը՝ էլեկտրոնային լուսապատճենի ձևով,

2. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 11.09.2024թ «Նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանին գրանցելու մասին» № 7-Ա որոշումը՝ էլեկտրոնային լուսապատճենի ձևով,
3. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 10.12.2024թ «Ազգային ժողովին օրենքի նախագիծ ներկայացնելու նպատակով հավաքված ստորագրությունների վավերականությունը հաստատելու մասին» № 12-Ա որոշումը և ինձ ուղղված ուղեկցական գրությունը՝ էլեկտրոնային լուսապատճենի ձևով,
4. «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ էլեկտրոնային փաստաթուղթ՝ թվային ստորագրությամբ,
5. «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքի ընդունման մասին» հիմնավորումը՝ էլեկտրոնային փաստաթուղթ՝ թվային ստորագրությամբ:
6. ««Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին» եզրակացությունը՝ թվային ստորագրությամբ:

Ծանոթություն: §§ 4-6 ում թվարկված փաստաթղթերը ներկայացվում են որպես մեկ նիշք:

Հարգանքներով՝
Նախաձեռնող խմբի
լիազոր ներկայացուցիչ Արտակ Զեյնալյան

Digitally signed by
ZEYNALYAN ARTAK 1909690309
Date: 2024-12-12 17:16:09